ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՊԻՏԱԼՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Աշոտ Մարկոսյան[*], *Բորիս Ավագյան*[**]

Ներածություն

Ժամանակակից համաշխարհային տնտեսությունն ազգային տնտեսությունների հանրագումարն է կամ ամբողջությունը, որը, սակայն, այդ տնտեսությունների մեխանիկական գումարը չէ: Ավելին, այն տնտեսական հարաբերությունների նոր որակ է և համակարգ՝ իրեն բնորոշ կանոնակարգերով և օրինաչափություններով: Հատկապես տնտեսական ինտեգրումը և գլոբալացումը մագնիսի այն երկու բևեռներն են, որոնք իրենց են ձգում ազգային տնտեսություններին: Զարգանալով, շարժվելով առաջին հերթին համաշխարհային կապիտալի օրենքներով և աշխարհակարգով՝ համաշխարհային տնտեսությունը ռացիոնալ ու արդյունավետ է դարձնում արտադրության գործոնների տեղաբաշխումը տարբեր պետությունների կամ դրանց տնտեսական միությունների տարածքներում: Այս տեսանկյունից առանձին ազգային տնտեսության բացարձակ և համեմատական առավելությունները պետք է տեղավորվեն ավելի խոշոր կառուցվածքային միավորների շահերի մեջ և բխեն դրանցից:

Համաշխարհային ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամը ցույց տվեց, որ աշխարհում առանձնացված և մեկուսացված պետություն գոյություն չունի: Համաշխարհային ճգնաժամից տուժեցին առանց բացառության բոլոր պետությունները, ինչպես գերհսկա, այնպես էլ փոքր: Հետևաբար, պետք է կարողանալ դասեր քաղել անցյալից՝ նոր սխալներ թույլ

[*] ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:
[**] Փորձագետ, տնտեսագիտության թեկնածու:

չտալու համար: Նման պայմաններում յուրաքանչյուր պետության կառավարության համար առաջնահերթ խնդիր է դառնում ոչ միայն խելամիտ միկրո- և մակրոտնտեսական քաղաքականություն ունենալը, այլև այդ ամենը կառուցելը՝ ելնելով արտաքին շուկաների պահանջներից կամ, ինչպես ընդունված է անվանել, մեգաէկոնոմիկայից: Փորձագիտական առանձին գնահատականների համաձայն, հատկապես փոքր երկրների համար դրսի (արտաքին) շուկաներն ունեն վճռական նշանակություն, և դրանք 70-80%-ով կանխորոշում են կառավարության վարած տնտեսական քաղաքականության հաջողությունը: Ըստ էության, ասվածից հետևում է, որ ելնելով արտաքին շուկաներից և դրանց պահանջներից՝ պետք է ձևավորել ազգային տնտեսության կառուցվածքը և նրա կողմից թողարկվող սպառողական արժեքները: Միայն այդ կերպ է հնարավոր ապահովել ազգային տնտեսության մրցունակությունը և արտահանման ծավալների ավելացումը: Նշված խնդիրն առանձնապես կարևորվում է Հայաստանի Հանրապետության համար, քանի որ վերջին տարիներին հանրապետության ներմուծումը գերազանցում է արտահանումը 3-4 անգամ: Բավական է նշել, որ եթե 2009թ. ՀՀ առևտրի հաշվեկշիռը կազմել է -$2611,0 մլն, ապա 2010թ.՝ -$2771,4 մլն, ըստ որում՝ 2009թ. արտահանման ծավալը կազմել է $710,2 մլն, իսկ ներմուծումն ըստ ապրանքի ծագման երկրի կազմել է $3321,1 մլն (արտահանման նկատմամբ գերազանցման չափը 4,7 անգամ): 2010թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ $1011,4 մլն, $3782,9 մլն, 3,7 անգամ [1, էջ 120-125]: Այստեղից էլ հետևում է, որ արտահանման ավելացման հիմնախնդրի լուծման գործում անգնահատելի կարող է լինել դրսի (օտարերկրյա) կապիտալի օժանդակությունը հայրենական տնտեսությանը: Եթե նկատի ունենանք, որ ՀՀ տնտեսությունը, փոքր լինելով հանդերձ, ունի արտաքին շուկաներ մտնելու և դրանցում ամրապնդվելու խնդիր, որոնց իրականացման համար պահանջվում են հսկայական միջոցներ, ապա օտարերկրյա կապիտալն ու դրա դերակատարումը դառնում են «փրկության» կարևոր միջոցներից մեկը:

Մյուս կողմից, ցանկացած երկրի համար օտարերկրյա կապիտալի մուտքն ազգային տնտեսություն միանշանակ չի ընդունվում, առաջին հեր-

թին, ազգային մասնավոր կապիտալի կողմից: Հաճախ լայնածավալ օտարերկրյա կապիտալ ընդգրկած կառավարությունները մեղադրվում են «երկիրն օտարներին ծախելու» մեղադրանքով: Իսկ նման կարգախոսների հետևից երևում են ազգային բուրժուազիայի ներկայացուցիչների ականջները: Օտարերկրյա և ազգային մասնավոր կապիտալների միջև պայքարը մեկ թեժանում է, մեկ էլ թուլանում: Խելամտությունը հուշում է, որ լավագույն իրավիճակն այն է, երբ օտարերկրյա և ազգային մասնավոր, ինչպես նաև պետական կապիտալները փնտրում ու գտնում են համագործակցության եզրեր հանուն ընդհանուր շահերի: Այնուհանդերձ, ելնելով երկրի առջև կանգնած սոցիալ-տնտեսական խնդիրներից, ինչպես նաև երկրի ներսում ընթացող հատկապես քաղաքական գործընթացներից, պետք է գտնել հայրենական և օտարերկրյա կապիտալների միջև այնպիսի հարաբերակցություն, որից շահում են այդ գործընթացի բոլոր կողմերը:

Համաշխարհային շուկայում զգալի հաջողություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ է նաև տարածաշրջանային համագործակցություն և անդամակցություն այս կամ այն տնտեսական միությանը: Միայն այդ կերպ ազգային և օտարերկրյա կապիտալների, ինչպես նաև համագործակցության տարբեր գործիքների միջոցով հնարավոր կդառնա բարձրացնել ազգային տնտեսության մրցակցությունը, հետևաբար նաև բնակչության բարեկեցությունը:

1. Ազգային և օտարերկրյա կապիտալների հաշվառման մեթոդաբանությունը

Ազգային և օտարերկրյա կապիտալների փոխհարաբերակցության վերաբերյալ վիճակագրական ու տեղեկատվական հիմք է հանդիսանում, ամենից առաջ, ազգային հաշիվների համակարգը (ԱՀՀ), որը կազմված է իրար հաջորդող փոխկապակցված հաշիվներից, որոնք ներառում են մի շարք դասակարգումներ, հայտնի չափով կազմում են համակարգի հիմքը և թույլ են տալիս ընդգրկել տարբեր տեսակետներ, ինչպիսիք են կառուցվածքային միավորները և հատվածները:

Կառուցվածքային միավորներ են հանդիսանում տնտեսական այն միավորները, որոնք ընդունակ են տիրապետել ակտիվներին և իրենց անունից ստանձնել պարտավորություններ: Դրանք կարող են զբաղվել գործառնությունների բոլոր տեսակներով և տնտեսական գործունեության բոլոր տեսակետներից հանդիսանալ որոշումներ ընդունելու կենտրոններ: Կախված իրենց հիմնական գործառնություններից, վարքից և նպատակից՝ կառուցվածքային միավորները խմբավորվում են ըստ հիմնական կառուցվածքային հատվածների: Հատվածը ներկայացնում է իրագործվող գործառնությունների և ֆինանսավորման աղբյուրների տեսանկյունից միատարր կառուցվածքային միավորների համակցություն: Տարբերակվում են ազգային տնտեսության հետևյալ հինգ հատվածները.

- ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ),
- ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ),
- պետական կառավարման մարմիններ,
- տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ,
- տնային տնտեսություններ:

Ոչ ֆինանսական կազմակերպությունները կառուցվածքային միավորներ են, որոնք գլխավորապես զբաղվում են շուկայական ապրանքների և ոչ ֆինանսական ծառայությունների արտադրությամբ:

Ֆինանսական կազմակերպությունները կառուցվածքային միավորներ են, որոնք հիմնականում զբաղվում են ֆինանսական միջնորդությամբ կամ օժանդակ ֆինանսական գործունեությամբ:

Պետական կառավարման մարմինները կառուցվածքային միավորներ են, որոնք իրենց քաղաքական գործառնությունների իրականացմանը և տնտեսության կարգավորման դերին զուգընթաց, արտադրում են առավելապես ոչ շուկայական ծառայություններ՝ անհատական կամ կոլեկտիվ սպառման համար, ինչպես նաև վերաբաշխում են եկամուտներն ու հարստությունը:

Տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններն իրավաբանական անձինք են, որոնք գլխավորապես զբաղ-

վում են տնային տնտեսությունների համար ոչ շուկայական ծառայությունների արտադրությամբ: Դրանց կարգավիճակը թույլ չի տալիս այդ կազմակերպությունները գրանցող միավորների համար լինել եկամտի, շահույթի կամ այլ ֆինանսական շահի աղբյուր: Այդ կազմակերպությունների հիմնական միջոցները գոյանում են տնային տնտեսությունների կամավոր մուծումներից:

Տնային տնտեսություններն անձանց ոչ մեծ խումբ են, որոնք բնակվում են միևնույն կացարանում, միավորում իրենց հարստությունը և եկամուտը կամ դրա մի մասը, և որոնք միասին սպառում են ապրանքների և ծառայությունների որոշ տեսակներ, հիմնականում՝ կացարանը և սննդամթերքը: Տնային տնտեսությունների հատվածում ներառված միավորները մասնակցում են արտադրությանը՝ տրամադրելով իրենց աշխատուժը և շուկայում ձեռք են բերում ապրանքներ ու ծառայություններ: Բացի դրանից, տնային տնտեսությունները երբեմն հանդիսանում են մանր, ոչ կորպորատիվ ձեռնարկությունների (ֆերմաներ, ընտանեկան ռեստորաններ, խանութներ և այլն) սեփականատերեր: Նման ոչ կորպորատիվ ձեռնարկություններն արտադրում են ապրանքներ և ծառայություններ՝ շուկայում վաճառքի, ինչպես նաև, մասամբ, սեփական սպառման համար: Ոչ կորպորատիվ ձեռնարկությունների գործունեության ֆինանսական արդյունքը հանդիսանում է խառը եկամուտը, որը ներառում է ինչպես շահույթի, այնպես էլ աշխատանքի վարձատրության տարրերը:

Վերը թվարկված հատվածների փոխադարձ կապն այլ երկրների հետ արտացոլելու նպատակով ձևավորվում է պայմանական հատված՝ «արտերկիր», որը միավորում է բոլոր կառուցվածքային միավոր-ոչ ռեզիդենտներին այն մասում, որտեղ դրանք փոխհամագործակցում են ազգային տնտեսության ռեզիդենտների հետ [2, էջ 240-241]:

Վերը թվարկված հինգ հատվածներից ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների հատվածները ստորաբաժանվում են ըստ առևտրային կամ շուկայական ծառայություններ մատուցող ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող կառուցվածքային միավորի տեսակի: Ոչ ֆինանսական և ֆինանսական

կազմակերպությունների հատվածները բաղկացած են երեք ենթահատվածներից՝

- պետական կազմակերպություններ (կորպորացիաներ),
- ազգային մասնավոր կազմակերպություններ (կորպորացիաներ),
- օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններ (կորպորացիաներ):

Իրականում ԱՀՀ-93-ն առաջարկում է պայմանականորեն ընդունել, որ կառուցվածքային միավորը վերահսկում է այս կամ այն կազմակերպությունն այն դեպքում, երբ դրա վերահսկողության կամ տրամադրության տակ են գտնվում կազմակերպության ավելի քան 50%-ը և ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերը (այն պայմանով, որ տվյալ կազմակերպության վերահսկման այլ ապացույցները բացակայում են, քանի որ որոշ դեպքերում վերահսկողություն կարելի է իրականացնել վերահսկողության փաթեթի կեսից զգալի քիչ մասի ձեռքբերման դեպքում):

Համաձայն վերը նշված մեթոդաբանության, Հայաստանի 2000թ. ԱՀՀ վերամշակման արդյունքներով, ՀՆԱ ծավալը, հիմնական գներով, տարանջատվել է նաև ըստ ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների ենթահատվածների՝ հիմնված կանոնադրական կապիտալում դրանց հիմնադիրների բաժնեմասի վերաբերյալ տեղեկատվության վրա, որը ստացվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից:

Եթե կանոնադրական կապիտալում մասնակցել են բոլոր երեք տեսակի հիմնադիրները, ապա կառուցվածքային միավորը դասակարգվել է ըստ այն տեսակի, որն ունի ամենամեծ բաժինը կանոնադրական կապիտալում: Իսկ եթե հիմնադիրների բաժնեմասերը հավասար են (50-50), ապա՝

- պետական և ազգային մասնավոր բաժնեմասերի հավասարության դեպքում կազմակերպությունը դասակարգվել է որպես պետական,
- պետական և օտարերկրյա բաժնեմասերի հավասարության դեպքում՝ կազմակերպությունը դասակարգվել է որպես պետական,

- օտարերկրյա և ազգային մասնավոր բաժնեմասերի հավասարության դեպքում՝ կազմակերպությունը դասակարգվել է որպես օտարերկրյա [2, էջ 102]:

Տնտեսության ամբողջական պատկերը ստանալու համար ամբողջ համախառն ավելացված արժեքը, գործունեությունը վերահսկելու հատկանիշից ելնելով, կարելի է ներկայացնել հետևյալ երեք մասերով՝ պետական, ազգային մասնավոր և օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող:

Այսպես, «պետական կառավարման մարմինների» հատվածի համախառն ավելացված արժեքը դասվում է պետական մասին, «տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների» և «տնային տնտեսությունների» հատվածների համախառն ավելացված արժեքը՝ ազգային մասնավոր մասին: «Ոչ Ֆինանսական կազմակերպությունների» և «ֆինանսական կազմակերպությունների» հատվածների համախառն ավելացված արժեքը բաշխվում է դրանց ենթահատվածներին համապատասխան:

2. Օտարերկրյա ներդրումների հոսքերը 2007-2010 թվականներին

2.1. Օտարերկրյա ներդրումներն ըստ տեսակների և Հայաստանի ներդրումներն արտասահմանյան երկրներում

Ցանկացած երկրի տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի ձևավորումն իրականացվում է օտարերկրյա ներդրումների ներհոսքի միջոցով, իսկ տվյալ երկրից այլ երկրներ ներդրումների արտահոսքի միջոցով ձևավորվում է տվյալ երկրի կապիտալն արտերկրում: *Աղյուսակ 1*-ում բերված են 2007-2010թթ. օտարերկրյա ներդրումների հոսքերը, ինչպես նաև Հայաստանի ներդրումներն արտերկրում: *Աղյուսակ 1*-ի տվյալներից հետևում է, որ 2010թ. 2009-ի համեմատ ներդրումները նվազել են 41,1%-ով: ՀՀ-ից ներդրումներն արտերկիր ավելացել են. 2009թ. 2007թ. համեմատ այդ հոսքերն ավելացել են ավելի քան 5 անգամ, ինչը խիստ մտահոգող է և վկայությունն է այն բանի, որ ՀՀ տնտեսության ներդրումային միջավայրը

(կլիման) մյուս երկրների համեմատությամբ զգալիորեն վատացել է: Հատկապես ավելացել է կապիտալի արտահոսքը հարևան երկիր՝ Վրաստան: Այսպես, առանձին փորձագետների կարծիքով, 2010թ. Հայաստանից արտահոսող կապիտալի ($94,4 մլն) կեսից ավելին հանգրվանել է Վրաստանում:

2.2. Տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալն ըստ երկրների

Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալն ըստ երկրների ցույց է տալիս [3, էջ 71, 4, էջ 71], որ դրանց մեծ մասը կատարվում է Ռուսաստանի Դաշնությունից, թեև այդ բաժինը 2010թ. 2007թ. համեմատ նվազել է 53,2%-ով՝ հասնելով ընդհանուրի մեջ 38,5%-ի: Էապես ավելացել է Ֆրանսիայի բաժինը՝ 2007թ. 2,2,%-ից 2010թ. հասնելով 20,9%-ի: Զգալիորեն ավելացել է նաև Նիդերլանդների բաժինը 1,0%-ից հասնելով 9,2%-ի: Նշված 3 երկրների բաժինը ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալում եթե 2007թ. կազմել է ընդամենը ներդրումների 56,4%-ը (այդ թվում ուղղակի ներդրումների՝ 53,9%-ը), ապա 2010թ. համապատասխանաբար՝ 68,51% և 71,4%: Բերված տվյալները վկայում են ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերի կենտրոնացվածության մասին, ինչը, վերջին հաշվով, կարիք ունի դիվերսիֆիկացման:

3. Ազգային և օտարերկրյա կապիտալը Հայաստանի Հանրապետությունում

3.1. Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն ըստ հատվածների և վերահսկողության հատկանիշի

Հանրապետության համախառն ներքին արդյունքը հիմնական գներով, հաշվի առած կառուցվածքային հատվածները, բերված են ստորև (*Աղյուսակ 2*):

Աղյուսակ 1

Օտարերկրյա ներդրումների հոսքերը 2007-2010թթ. ըստ ներդրումների տեսակների ($մլն-ով և %-ներով համապատասխան բաժնի մեջ) [3, էջ 70 և 4, էջ 70]

	Ներդրումներ Հայաստանում (պարտավորություններ)								Հայաստանի ներդրումներն արտերկրում (ակտիվներ)							
	2007		2008		2009		2010		2007		2008		2009		2010	
	մլն դոլար	%	մլն դոլար	%	մլն դոլար	%	մլն դոլար	%	մլն դոլար	%	մլն դոլար	%	մլն դոլար	%	մլն դոլար	%
Ընդամենը ներդրումներ	**1351.8**	**100**	**1934.8**	**100**	**2555.4**	**100**	**1505.7**	**100**	**36.1**	**100**	**72.5**	**100**	**193.7**	**100**	**94.4**	**100**
Ուղղակի ներդրումներ	**669.8**	**49.55**	**1132.4**	**58.53**	**906.2**	**35.46**	**693.4**	**46.05**	**3.2**	**8.86**	**10.2**	**14.07**	**52.7**	**27.21**	**8.3**	**8.79**
Պորտֆելային ներդրումներ	**0.1**	**0.01**	**6.6**	**0.34**	**11.0**	**0.43**	**0.4**	**0.03**	**0.5**	**1.39**	**0.02**	**0.03**	**10.6**	**5.47**	**1.5**	**1.59**
Այլ ներդրումներ[1]	**681.9**	**50.44**	**795.8**	**41.13**	**1638.2**	**64.11**	**811.9**	**53.92**	**32.5**	**90.03**	**62.2**	**85.79**	**130.4**	**67.32**	**84.7**	**89.72**
Առևտրային վարկ	**56.9**	**8.34**	**49.4**	**6.21**	**49.9**	**3.05**	**26.6**	**3.28**	**22.1**	**68.00**	**21.5**	**34.57**	**8.8**	**6.75**	**12.1**	**14.29**
Կարճաժամկետ	34.2	60.11	-5.6	-11.34	31.2	62.53	5.9	22.18	22.1	100.00	21.5	100.00	8.8	100.00	12.1	100.00
Երկարաժամկետ	22.7	39.89	54.1	109.51	18.7	37.47	20.7	77.82	-	-	-	-	-	-	-	-
Վարկեր	**625.0**	**91.66**	**746.4**	**93.79**	**1588.3**	**96.95**	**785.2**	**96.71**	**10.3**	**31.69**	**40.8**	**65.59**	**121.6**	**93.25**	**72.5**	**85.60**
Կարճաժամկետ	134.5	21.52	119.4	16.00	-	-	49.4	6.29	8.3	80.58	36.2	88.73	120.0	98.68	62.6	86.34
Երկարաժամկետ	490.5	78.48	627.1	84.02	1588.3	100.00	735.8	93.71	2.0	19.42	4.6	11.27	1.6	1.32	9.9	13.66
Դրամավարկային կարգավորման մարմիններ	19.86	4.05	16.76	2.67	337.4	21.24	99.7	13.55	-	-	-	-	-	0.00	-	-
Պետական կառավարման մարմիններ	198.1	40.39	160.1	25.53	1065	67.05	313.7	42.63	-	-	-	-	-	-	-	-
Բանկեր	136.2	27.77	289.3	46.13	0	0.00	150.3	20.43	1.02	51.00	4.0	86.96	-	-	7.9	79.80
Այլ հատվածներ	136.3	27.79	160.9	25.66	186.2	11.72	172.1	23.39	1.00	50.00	0.6	13.04	1.6	100.00	2.0	20.20

[1] Առանց կանխիկ դրամական միջոցների և ավանդների ու այլ պարտավորությունների (ակտիվների):

Աղյուսակ 2

*Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն ըստ հատվածների և վերահսկողության հատկանիշի 2004-2008թթ. (հիմնական գներով) [2, էջ 119-120, 127-128]**

Կառուցվածքային հատվածներ	**2004թ.**				**2008թ.**			
	Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի				Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի			
	Պետական	Ազգային մասնա-վոր	Օտար-երկրյա վերա-հսկո-ղության տակ	Ընդամենը	Պետական	Ազգային մասնա-վոր	Օտարեր-կրյա վերահս-կողության տակ	Ընդամենը
Ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ)	157644.2	736680.1	24 326.5	1142650.8	123700.9	1267560.3	511621.7	1902882.9
	8.9	41.5	14.1	64.5	3.8	39.4	15.9	59.1
Ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ)	4 705.7	12 409.4	13230.8	30 345.9	33485.9	47852.8	39681.4	121020.1
	0.3	0.7	0.7	1.7	1.1	1.5	1.2	3.8
Պետական կառավարման մարմիններ	114050.3	-	-	114 050.3	215912.4	-	-	215912.4
	6.4	-	-	6.4	6.7		-	6.7
Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ (ՏՏՍՈԱԿ)	-	1 568.9	-	1 568.9	-	4 883.4	-	4 883.4
	-	0.1	-	0.1	-	0.2	-	0.2
Տնային տնտեսություններ	-	483613.9	-	483613.9	-	973259.5	-	973259.5
	-	27.3	-	27.3	-	30.2	-	30.2
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	**276400.2**	**1234272.3**	**261557.3**	**1772229.8**	**373099.2**	**2293556.0**	**551303.1**	**3217958.3**
	15.6	**69.6**	**14.8**	**100.0**	**11.6**	**71.3**	**17.1**	**100.0**

* Համարիչում՝ մլն դրամ, հայտարարում՝ տոկոսներով ընդամենի նկատմամբ:

Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ հանրապետության ՀՆԱ-ն 2004թ. բաշխվել է պետական, ազգային մասնավոր և օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող հատկանիշի միջև, համապատասխանաբար 15,6%, 69,6% և 14,8% համամասնությամբ: Այդ հարաբերակցությունը 2008թ. կազմել է համապատասխանաբար՝ 11,6%, 71,3% և 17,1%: Հեշտ է նկատել, որ 2004-2008թթ. ՀՆԱ բաժինը պետական մասում նվազել է 4 տոկոսային կետով, ինչի հաշվին 1,7 տոկոսային կետով ավելացել են ազգային մասնավորի և 2,3 տոկոսային կետով օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող մասերի բաժինները: ՀՆԱ պետական բաժնեմասի ամենամեծ փոփոխությունը 2008թ. 2004թ. համեմատությամբ նկատվել է ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում՝ 8,9%-ից այն նվազել է 3,8%-ի (նվազեցման չափը կազմել է 5,1 տոկոսային կետ): Նույն ժամանակահատվածում ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում պետական բաժնեմասը 0,3%-ից հասել է 1,1%-ի (աճը կազմել է 0,8 տոկոսային կետ), իսկ պետական կառավարման մարմինների բաժինը 6,4%-ից հասել է 6,7%-ի (աճը կազմել է 0,3 տոկոսային կետ): Ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում ազգային մասնավոր վերահսկողության մասում ստեղծված ՀՆԱ բաժինը նշված ժամանակահատվածում 41,5%-ից նվազել է մինչև 39,4% (նվազումը կազմել է 2,1 տոկոսային կետ), ֆինանսական (կորպորացիաների) հատվածում ազգային մասնավոր բաժինը 0,7%-ից հասել է 1,5%-ի (աճը կազմել է 0,8 տոկոսային կետ), իսկ տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների հատվածում ազգային մասնավոր բաժինը 0,1%-ից հասել է 0,2%-ի (աճը կազմել է 0,1 տոկոսային կետ): 2004թ. ՀՀ ՀՆԱ 64,5%-ը ստեղծվել է ոչ ֆինանսական կազմակերպություններում, 6,4%-ը՝ պետական կառավարման մարմիններում, 1,7%-ը՝ ֆինանսական կազմակերպություններում, 0,1%-ը՝ տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններում և 27,3%-ը՝ տնային տնտեսություններում: Նշված ցուցանիշների մեծությունները 2008թ. կազմել են համապատասխանաբար. 59,1% (նվազումը կազմել է 5.4 տոկոսային կետ), 3.8% (աճը կազմել է 2,1 տոկոսային

կետ), 6,7% (աճը՝ 0,3 տոկոսային կետ), 0,2% (աճը՝ 0,1 տոկոսային կետ), 30,2% (աճը՝ 2,9 տոկոսային կետ):

Աղյուսակ 3-ում ներկայացված է 2004-2008թթ. ՀՀ ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների հատվածների համախառն ավելացված արժեքն ըստ ենթահատվածների և տնտեսական գործունեության տեսակների: *Աղյուսակ 4*-ի տվյալներից հետևում է, որ եթե 2004թ. օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականություն չի եղել տնտեսական գործունեության 3 տեսակներում (գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն, պետական կառավարում), ապա 2008թ. այդ գործունեության տեսակները եղել են 2-ը (ձկնորսություն, ձկնագործություն և պետական կառավարում): Հատկանշական է, որ եթե ոչ ֆինանսական հատվածի ավելացված արժեքն ըստ սեփականության ենթահատվածների 2004թ. ունեցել է 13,8% (պետական), 64,5% (ազգային մասնավոր) և 21,7% (օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող) կառուցվածքը, ապա 2008թ. այդ հարաբերակցությունը կազմել է համապատասխանաբար 6,5%, 66,6% և 26,9%: Ֆինանսական հատվածի ավելացված արժեքի 32,8%-ը 2008թ. ստեղծվել է օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության ոլորտում: Ըստ որում՝ 2004թ. համեմատ այդ բաժինը 8,1 տոկոսային կետով նվազել է: 2004թ. օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության բաժինն ամենաբարձրն է եղել էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտում (82,3%): 2008թ. օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության բաժինն ամենաբարձրն է եղել հանքագործական արդյունաբերությունում (94,5%): 2008թ. 2004թ. համեմատ օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության ոլորտում ստեղծված ոչ ֆինանսական հատվածի ավելացված արժեքն ավելացել է 206,0%-ով՝ 248,3 մլրդ դրամից հասնելով 511,6 մլրդ դրամի: Օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության բաժինն ամենացածր մակարդակը 2008թ. ունեցել է գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսությունում, նույն թվականին պետական սեփականության ամենաբարձր մակարդակը եղել է կրթության ոլորտում (81,7%):

Աղյուսակ 3

*Հայաստանի Հանրապետության ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների հատվածների համախառն ավելացված արժեքն ըստ ենթահատվածների և տնտեսական գործունեության տեսակների 2004-2008թթ. [2, էջ 104-106, 116-117]**

Տնտեսական գործունեության տեսակները	2004թ. Ենթահատվածներն ըստ սեփականության				2008թ. Ենթահատվածներն ըստ սեփականության			
	Պետական	Մասնավոր ոլորտ	Խառնուրդ՝ պետական կամ մասնավոր	Ընդամենը	Պետական	Մասնավոր ոլորտ	Խառնուրդ՝ պետական կամ մասնավոր	Ընդամենը
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	8 098.3	168 094.3	-	176 192.6	3 229.7	221 726.4	111.8	225 067.9
	4.6	95.4	-	100.0	1.4	98.5	0.1	100.0
Ձկնորսություն, ձկնաբուծություն	62.5	979.4	-	1 041.9	-	6 673.8	-	6 673.8
	6.0	94.0	-	100.0	-	100.0	-	100.0
Հանքագործական արդյունաբերություն	49 597.6	8 976.7	3 374.8	61 949.1	-	3 025.9	52 464.9	55 490.8
	80.1	14.5	5.4	100.0	-	5.5	94.5	100.0
Մշակող արդյունաբերություն	20 306.6	144 929.2	76 986.1	242 221.9	1 931.0	207 811.1	77 259.2	287 001.3
	8.4	59.8	31.8	100.0	0.7	72.4	26.9	100.0
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	13 883.4	3 909.8	82 947.3	100 740.5	16 701.5	2 406.3	79 982.6	99 090.4
	13.8	3.9	82.3	100.0	16.9	2.4	80.7	100.0
Շինարարություն	12 422.8	166 998.3	3 863.3	183 284.4	10 483.9	381 672.8	61 946.1	454 102.8
	6.8	91.1	2.1	100.0	2.3	84.1	13.6	100.0
Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	393.3	176 309.0	24 025.7	200 728.0	76.9	311 535.5	64 675.7	376 288.1
	0.2	87.8	12.0	100.0	0.0	82.8	17.2	100.0
Հյուրանոցներ և ռեստորաններ	174.1	4 730.5	1 802.2	6 706.8	29.4	11 189.0	2 530.3	13 748.7
	2.6	70.5	26.9	100.0	0.2	81.4	18.4	100.0
Տրանսպորտ և կապ	18 726.2	19 167.3	52 691.8	90 585.3	8 480.9	50 817.4	153 668.0	212 966.3
	20.7	21.1	58.2	100.0	4.0	23.9	72.1	100.0
Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և ապառքների ծառայությունների մատուցում	7 758.2	10 543.1	332.0	18 633.3	8 837.2	36 995.7	10 815.5	56 648.4
	41.6	56.6	1.8	100.0	15.6	65.3	19.1	100.0
Պետական կառավարում	-	173.3	-	173.3	32.8	62.1	-	94.9
	-	100.0	-	100.0	34.6	65.4	-	100.0
Կրթություն	14 418.5	6 528.3	670.1	21 616.9	28 076.9	4 430.5	1 853.1	34 360.5
	66.7	30.2	3.1	100.0	81.7	12.9	5.4	100.0
Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում	10 141.8	14 192.9	155.0	24 489.7	41 512.7	17 961.4	803.0	60 277.1
	41.4	58.0	0.6	100.0	68.9	29.8	1.3	100.0
Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	1 660.9	11 148.0	1 478.2	14 287.1	4 308.0	11 252.4	5 511.5	21 071.9
	11.6	78.0	10.4	100.0	20.4	53.4	26.2	100.0
Ոչ ֆինանսական հատվածի ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	**157 644.2**	**736 680.1**	**248 326.5**	**142 650.8**	**123700.9**	**1267560.3**	**511621.7**	**1902882.9**
	13.8	**64.5**	**21.7**	**100.0**	**6.5**	**66.6**	**26.9**	**100.0**
Ֆինանսական գործունեություն	4 705.7	12 409.4	13 230.8	30 345.9	33 485.9	47 852.8	39 681.4	121 020.1
	15.5	40.9	43.6	100.0	27.7	39.5	32.8	100.0
Ֆինանսական հատվածի ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	**4 705.7**	**12 409.4**	**13 230.8**	**30 345.9**	**33 485.9**	**47 852.8**	**39 681.4**	**121 020.1**
	15.5	**40.9**	**43.6**	**100.0**	**27.7**	**39.5**	**32.8**	**100.0**

* Համարիչում՝ մլն դրամ, հայտարարում՝ տոկոսներով ընդամենի նկատմամբ:

Աղյուսակ 4

Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն ըստ հատվածների և վերահսկողության հատկանիշի 2004-2008թթ. (%-ով ընդամենի նկատմամբ) [2, էջ 120, 128]

Կառուցվածքային հատվածներ	2004թ.				2008թ.			
	Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի				Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի			
	պետական	մասնավոր ազգային	հիմն. գործակիցների միջազգային	Ընդամենը	պետական	մասնավոր ազգային	հիմն. գործակիցների միջազգային	Ընդամենը
Ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ)	13.8	64.5	21.7	100.0	6.5	66.6	26.9	100.0
Ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ)	15.5	40.9	43.6	100.0	27.7	39.5	32.8	100.0
Պետական կառավարման մարմիններ	100.0	-	-	100.0	100.0	-	-	100.0
Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ (ՏՏՍՈԱԿ)	-	100.0	-	100.0	-	100.0	-	100.0
Տնային տնտեսություններ	-	100.0	-	100.0	-	100.0	-	100.0
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	15.6	69.6	14.8	100.0	11.6	71.3	17.1	100.0

Աղյուսակ 4-ի տվյալներից հետևում է, որ եթե 2004թ. ՀՀ ՀՆԱ (ավելացված արժեքի) 14,8%-ն էր ստեղծվում օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպություններում, ապա 2008թ.՝ 17,1%-ը (աճը՝ 2,3 տոկոսային կետ): Ըստ որում, եթե 2004թ. օտարերկրյա վերահսկողության տակ է գտնվում ոչ ֆինանսական կազմակերպություններում ստեղծվող ավելացված արժեքի 21,7% և ֆինանսական կազմակերպություններում ստեղծվող ավելացված արժեքի 43,6%-ը, ապա 2008թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 26,9% (աճը կազմել է 5,2 տոկոսային կետ) և 32,8% (նվազել է 10,8 տոկոսային կետով): Այսպիսով, կարող ենք ամրագրել, որ 2008թ. տվյալներով՝

օտարերկրյա վերահսկողության տակ է եղել ոչ ֆինանսական կազմակերպություններում ստեղծվող ավելացված արժեքի ավելի քան 1/4-ը և ֆինանսական կազմակերպություններում ստեղծված արժեքի մոտ 1/3-ը (տե՛ս նաև *Գծապատկերներ 1-ը և 2-ը*):

Աղյուսակ 5-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ-ում օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող տնտեսության հատվածների ճնշող մեծամասնությունը (2004թ.՝ 94,9%-ը, իսկ 2008թ.՝ 92,8%-ը) բաժին է ընկնում ոչ ֆինանսական կազմակերպություններին, իսկ ֆինանսական կազմակերպություններին՝ համեմատաբար ավելի փոքր մասը (2004թ.՝ 5,1%-ը, իսկ 2008թ.՝ 7,2%-ը):

Աղյուսակ 5

Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն ըստ հատվածների և վերահսկողության հատկանիշի 2004-2008թթ. (%-ով ընդամենի նկատմամբ) [2, էջ 121, 129]

Կառուցվածքային հատվածներ	**2004թ.**				**2008թ.**			
	Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի				Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի			
	դուրսից	մասնավոր դրամագլուխ	հյուս դրսից մասնավորվող դրամագլուխ	Ընդամենը	դուրսից	մասնավոր դրամագլուխ	հյուս դրսից մասնավորվող դրամագլուխ	Ընդամենը
Ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ)	57.0	59.7	94.9	64.5	33.1	55.3	92.8	59.1
Ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ)	1.7	1.0	5.1	1.7	9.0	2.1	7.2	3.8
Պետական կառավարման մարմիններ	41.3	-	-	6.4	57.9	-	-	6.7
Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ (ՏՏՍՈԱԿ)	-	0.1	-	0.1	-	0.2	-	0.2
Տնային տնտեսություններ	-	39.2	-	27.3	-	42.4	-	30.2
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Գծապատկեր 1

Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածի համախառն ավելացված արժեքի կառուցվածքը ըստ ենթահատվածների [2, էջ 130]



Գծապատկեր 2

Ֆինանսական կազմակերպությունների հատվածի համախառն ավելացված արժեքի կառուցվածքը ըստ ենթահատվածների [2, էջ 130]



ՀՀ 2001-2008թթ. ՀՆԱ՝ ըստ հատվածների և վերահսկողության հատկանիշի կատարված վերլուծության տվյալները [2, էջ 119-120, 121-122, 123-124, 125-126, 127-128] ցույց են տալիս, որ օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող ՀՆԱ-ն 2004թ. 261,6 մլրդ դրամից (ամբողջ ՀՆԱ 14,8%-ը) 2005թ. կազմել է 366,5 մլրդ (17,7%), 2006թ.՝ 418,0 մլրդ դրամ (17,0%), 2007թ.՝ 520,6 մլրդ դրամ (18,1%), 2008թ.՝ 551,3 մլրդ դրամ (17,1%): Եթե նկատի ունենանք, որ օտարերկրյա կապիտալի ընդլայնման հնարավորությունները ՀՀ տնտեսության պետական կառավարման, տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների և տնային տնտեսությունների հատվածներում խիստ սահմանափակ են (մինչև օրս այդ հատվածներում օտարերկրյա կապիտալի բաժինը գործնականում հավասար է զրոյի), ուստի օտարերկրյա կապիտալի ընդլայնման համար մնում է երկու հատված՝ ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) և ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածները: Եթե դատելու լինենք 2008թ. տվյալներով, ապա ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում պետական մնացած 33,1%-ը կարող է բաշխվել ազգային մասնավոր և օտարերկրյա կապիտալի միջև, իսկ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում այդ հնարավորությունն ավելի սահմանափակ է և կազմում է պետական վերահսկողության տակ գտնվող ՀՆԱ ընդամենը 9,0%-ը (մնացած 57,9%-ը բաժին է ընկնում պետական կառավարման հատվածին):

3.2. Ազգային և օտարերկրյա կապիտալը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում

Ըստ ներգրավման աղբյուրների, ընդունված է կապիտալը տարանջատել ազգային (հայրենական) և օտարերկրյա կապիտալի: Վերջինս, որպես կանոն, տվյալ երկրի համար ոչ ռեզիդենտ համարվող անձանց կողմից ներդրված կապիտալն է տվյալ երկրում գործող կազմակերպություններում: Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի համար կապիտալի տվյալ դասակարգումը բավական արդիական է, քանի որ

բանկային համակարգում արտասահմանյան կապիտալի տեսակարար կշիռը բավական բարձր է: Համաձայն մեր կողմից կատարված վերլուծությունների, 2010 թվականի հունիսի 31-ի դրությամբ արտասահմանյան կապիտալի տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում կազմում է 78% (տե՛ս *Գծապատկեր 3*):

Գծապատկեր 3

Օտարերկրյա և ազգային կապիտալների տեսակարար կշիռները ՀՀ բանկային համակարգում 2010թ. հունիսի 31-ի դրությամբ [5]



Գծապատկեր 3-ից կարելի է անել մի շարք եզրահանգումներ.

- ՀՀ բանկային համակարգը փակ համակարգ է, քանի որ 21 բանկերից միայն «Արարատ բանկը» և «Զարգացման հայկական բանկն» ունեն բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ, իսկ մնացածները՝ փակ բաժնետիրական ընկերության («Պրոմեթեյ բանկը»՝ ՍՊԸ),

- 21 բանկերից 11-ը (կեսից ավելին) ամբողջությամբ (100%) արտասահմանյան կապիտալով են, մնացած 10-ը՝ խառը,
- օտարերկրյա և ազգային կապիտալով՝ «խառը» 10 բանկերից 7-ում հայրենական կապիտալի տեսակարար կշիռը բանկի կանոնադրական կապիտալում գերազանցում է դրա 50%-ը («Արարատբանկ», «Արդշինինվեստբանկ», «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ», «Ինեկոբանկ», «Զարգացման հայկական բանկ», «Պրոմեթեյ բանկ», «Հայէկոնոմբանկ»), իսկ մնացած 3-ում («Արցախ բանկ», «Կոնվերս բանկ», «Հայբիզնեսբանկ») պակաս են 50%-ից,
- ազգային կապիտալի տեսակարար կշիռը բանկի կանոնադրական կապիտալում ամենաբարձրն է «Պրոմեթեյ բանկում» (ավելի քան 80%) և «Արդշինինվեստբանկում» (շուրջ 80%), իսկ ամենացածրը՝ «Կոնվերս բանկում» (մինչև 5%) և «Արցախ բանկում» (մինչև 10%),
- բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ ունեցող երկու («Արարատբանկ», «Հայէկոնոմբանկ») ազգային կապիտալի տեսակարար կշիռը բանկի կանոնադրական կապիտալում գերազանցում է դրա 50%-ը:

Եզրակացություն

Կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ առաջիկա տարիներին ՀՀ ՀՆԱ ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածների դեռևս պետական մնացած 42,1%-ի համար պայքար է մղվելու ազգային մասնավոր և օտարերկրյա կապիտալների միջև: Ընդհանուր առմամբ, 2008թ. տվյալներով՝ պետական մնացած այդ հատվածների գումարը կազմում է 157 մլրդ 186,8 մլն դրամ (որից 123,7 մլրդ դրամը ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում, մնացածը (33,5 մլրդ դրամ) ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում: Փոխհարաբերությունների հաջորդ դաշտը, որը կարող է ձևավորվել ազգային մասնավոր և օտարերկրյա կապիտալի միջև և դառնալ առուծախի առարկա, կազմում է շուրջ 1315,4 մլրդ դրամ (որից 1267,6 մլրդ դրամը ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում, մնացածը՝ 47,8 մլրդ դրամը, ֆինանսական կազմա-

կերպությունների (կորպորացիաների) հատվածում: Ստացվում է, որ դրսի կապիտալի համար ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում կարող է ներդրումների առարկա դառնալ 1391,3 մլրդ դրամ արժեքով կապիտալը, իսկ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում՝ 81.4 մլրդ դրամ կապիտալը: Եթե ընդունենք, որ օտարերկրյա կապիտալի կողմից ամբողջությամբ ձեռք կբերվի ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) և ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) պետական և ազգային մասնավոր բաժնետոմսերը, ապա այդ դեպքում օտարերկրյա կապիտալի բաժինը, 2008թ. տվյալներով, կարող է հասնել 62,9%-ի, ինչը քիչ հավանական է: Ասվածից հետևում է, որ առաջիկա տարիներին օտարերկրյա կապիտալի ավելացումը կախված է երկու հանգամանքից.

- պետական սեփականությունը մասնավորեցնելու ՀՀ կառավարության քաղաքականությունից և պետական հատված - մասնավոր կազմակերպություններ (այդ թվում՝ օտարերկրյա) համագործակցությունից,
- ազգային մասնավոր ձեռնարկատերերի և դրսի կապիտալի համագործակցությունից, որը կարող է ունենալ համագործակցության ամենատարբեր ձևեր, սկսած համատեղ ձեռնարկությունների ստեղծումից մինչև համապատասխան ակտիվների ձեռքբերումը, ինչպես ազգային մասնավոր, այնպես էլ օտարերկրյա կապիտալի տերերի կողմից:

Օտարերկրյա կապիտալի ընդունումն, ի դեպ, լավագույն և իրական հնարավորությունն ու միջոցն է տնտեսությունը դիվերսիֆիկացնելու համար, և դրա կոնկրետ ձևերի ու ոլորտների ընտրությունն օտարերկրյա և ազգային կապիտալի տերերի նախընտրությունների և պատկերացումների շրջանակի մեջ է գտնվում: Իսկ ՀՀ կառավարության հիմնական գործառույթն այս հարցում լավագույն մակրոտնտեսական քաղաքականության ապահովումն է նշված համագործակցության իրականացման համար և ներդրումային միջավայրի էական բարելավումը՝ քաղաքական տնտեսական, սոցիալական և բարոյահոգեբանական ոլորտներում:

Մարտ, 2012թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թվականի հունվար-դեկտեմբերին, Տեղեկատվական ամսական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2011:
2. Հայաստանի ազգային հաշիվները 2010, Եր., ՀՀ ԱՎԾ:
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար-փետրվարին, Տեղեկատվական ամսական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2011:
4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թվականի հունվար-փետրվարին, Տեղեկատվական ամսական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009:
5. ՀՀ առևտրային բանկերի պաշտոնական ինտերնետային կայքեր, www.banks.am:

ПРОБЛЕМЫ СООТНОШЕНИЯ ОТЕЧЕСТВЕННОГО И ИНОСТРАННОГО КАПИТАЛОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ашот Маркосян, Борис Авагян

Резюме

Авторы статьи обсуждают важность одного из факторов производства – инвестиций для небольших национальных экономик, которые функционируют в условиях все большей открытости мировой экономики. Понятно, что развитие такой экономики, как армянская, которая характеризуется низким уровнем платежеспособности населения и малым объемом рынка, во многом зависит от внешних вливаний (как инвестиций в производство, так и трансфертов от частных лиц).

С целью изучения соотношения отечественного и иностранного капиталов в экономике РА авторы для начала представляют основные положения методологии, используемой Национальной статистической службой РА при подсчете капиталов, инвестиций.

Соотношение отечественного и иностранного капиталов изучено также с помощью отраслевых показателей ВВП и показателей, характеризующих подконтрольность капиталов; особое внимание уделено капиталовложениям в банковской сфере РА. Кроме того, авторы изучают тенденции, присущие сфере инвестирования, предсказывают возможное дальнейшее соотношение отечественного и иностранного капиталов, а также их объемы в финансовом и нефинансовом секторах экономики РА.